

2020

ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ
ԱՌԵՎՏՐԻ ԿԵՆՏՐՈՆ

ՀՀ ք. Աբովյան, Բարեկամության հրապարակ, թիվ 3/1

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ (լրամշակված)

ԿԱՏԱՐՈՂ
Ա/Ձ Ա. ԳԱԼՈՅԱՆ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
«ՄԻՓԱՆ ՀՅՈՒՐԱՆՈՑ» ՍՊԸ

Ա/Ձ Ա. Գալոյան
ք. Երևան Սևանի 5
Հեռ. բջջ. +374 99 994222
galoyan.aram@gmail.com

ՀՀ



ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ԱՌԵՎՏՐԻ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ք. Աբովյան, Բարեկամության հրապարակ, թիվ 3/1

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՑ (լրամշակված)

«ՄԻՓԱՆ ՀՅՈՒՐԱՆՈՑ» ՍՊԸ տնօրեն՝

Ա. Ղամբարյան

Ա/Ձ ԱՐԱՄ ԳԱԼՈՅԱՆ



Երևան 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	4
1.1	Ձեռնարկողի մասին տեղեկություն	4
1.3	Հապավումներ	4
1.4	Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը	5
1.5	Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)	6
1.5.1	<i>Ներկա վիճակի նկարագիր</i>	6
1.5.2	<i>Նախատեսվող գործունեության նկարագիր</i>	6
1.5.3	<i>Քանդման աշխատանքներ</i>	Error! Bookmark not defined.
1.5.4	<i>Նախատեսվող աշխատանքների կազմակերպում</i>	Error! Bookmark not defined.
1.5.5	<i>Նախատեսվող գործունեության տարածքի իրավիճակային հատակագիծ</i>	9
1.5.6	<i>Շին. մոնտաժային աշխատանքների իրականացման ժամանակացույց</i>	13
1.5.7	<i>Կադրային ապահովում և շինտեխնիկա. Հողային աշխատանքներ</i>	14
1.5.8	<i>Նյութերի և բնարեսուրսների օգտագործում</i>	Error! Bookmark not defined.
1.5.9	<i>Արտաքին ցանցեր</i>	21
1.5.10	<i>Էլ. մատակարարում</i>	22
1.5.11	<i>Ջրամատակարարում և ջրահեռացում</i>	Error! Bookmark not defined.
1.5.12	<i>Գազամատակարարում</i>	22
1.5.13	<i>Կանաչապատման աշխատանքներ</i>	23
2.	ՆԱԽՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ	26
2.1	Ֆիզիկաաշխարհագրական պայմանները.....	26
2.2	Կլիման	Error! Bookmark not defined.
2.3	Օդային ավազան	32
2.4	Ջրային ռեսուրսներ	33
2.5	Հողերի նկարագիրը	33
2.6	Հողային ռեսուրսներ	33
2.7	Բուսական աշխարհ	Error! Bookmark not defined.
2.8	Կենդանական աշխարհ	Error! Bookmark not defined.
2.9	Հողերի նպատակային և գործառնական նշանակությունը	Error! Bookmark not defined.
2.10	Թափոնների կառավարում	34
3.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	34
3.1	Ռիսկերի գնահատում	34
3.2	Արտանետումների աղբյուրները	35
3.3	Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն	35
3.3.1	<i>Մթնոլորտային օդ</i>	35
3.3.2	<i>Ջրային ռեսուրսներ</i>	35
3.3.3	<i>Հողային ռեսուրսներ</i>	36
3.3.4	<i>Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը</i>	36
3.3.5	<i>Աղմուկ և թրթռում</i>	37
3.3.6	<i>Թափոնների կառավարում</i>	38
3.3.7	<i>Տարածքի բարեկարգում կանաչապատում</i>	39
4.	ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ	39
	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	40
	ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ	43
	ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	37
	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	38

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

1.2 Ձեռնարկող՝ «ՄԻՓԱՆ ՀՅՈՒՐԱՆՈՑ» ՍՊԸ

1.3 Ձեռնարկողի իրավաբանական հասցեն՝ ՀՀ ք. Աբովյան, Բարեկամության թ. 3

1.5 Նախատեսվող գործունեության հասցեն՝ ՀՀ ք. Աբովյան, Բարեկամության հրապարակ, թիվ 3/1

1.6 Հեռախոս՝ +37499994222

1.7 Աշխատանքային նախագծի մշակող՝

1.3 Հապավումներ

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն

ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

1.4 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Գործունեության նպատակն է կառուցել ժամակակից բազմաբնակարան բնակելի շենքեր և առևտրի կենտրոն: Բազմաբնակարան բնակելի շենքերի և առևտրի կենտրոնի կառուցման նախագիծը նախատեսվում է իրականացնել Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հրապարակ, թիվ 3/1 հասցեում:

Բազմաբնակարան բնակելի շենքերի և առևտրի կենտրոնի կառուցման աշխատանքային նախագիծը իրականացված է ՀՀ-ում գործող նորմատիվ փատաթղթերի պահանջներին համապատասխան:

2014թ.-ի հունիսի 21-ի "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի պահանջներին համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է գործունեության ենթակա տարածքի բնապահպանական ելակետային պայմանները, գործունեության իրականացման համար նախատեսվող աշխատանքները և գործողությունները, գործունեության իրականացման արդյունքում բնապահպանական հնարավոր ազդեցության շրջանակը և գնահատականը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

1.5 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.5.1 Ներկա վիճակի նկարագիր

Բազմաբնակարան բնակելի շենքերի և առևտրի կենտրոնի կառուցապատման համար նախատեսված տարածքը գտնվում է Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հրապարակ, թիվ 3/1 հասցեում:

Կառուցապատման ենթակա հողատարածքի վրա գոյություն ունեն շինություններ՝ պահակատուն և լողավազան, տարածքը հարթ է, տեղ-տեղ հանդուպում հողային ծածկույթ, քանդման և ապամոնտաժման աշխատանքներ չի իրականացվելու:

Երկրաբանական տեսակետից տարածքը բարենպաստ է կառուցապատման համար:

Հողատարածքի մակերեսը կազմում է 0.767136 հա՝ (կադաստրային ծածկագիր՝ 07-002-0047-0015):

- հողատարածքի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի
- գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակելի կառուցապատման, հասարակական կառուցապատման
- գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն

Տեղ-տեղ հանդիպող հողային ծածկույթի վրա, որտեղ բուսահողի հզորությունը 20 սմ է, տարածված է կիսաանապատային գոտուն բնորոշ բազմամյա խոտի տեսքով խառը աճած բուսականություն, մասնավորապես՝ Սեզ սողացող (*E. repens*), Սեզ սանրանմանը (*E. cristatum*), Սեզ մազակիրը (*E. trichophora*), Սեզ միջինը (*E. intermedia*), Սեզ երկարավունը (*E. elongatum*): Ամբողջ հողամասում բուսահողի ծավալը գնահատվել է մոտ 750մ³:

1.5.2 Նախատեսվող գործունեության նկարագիր

Բազմաբնակարան բնակելի համալիր

1. Ք. Աբովյան, բարեկամության հրապարակի 3/1 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքերի եվ առեվտրի կենտրոնի կառուցման նախագիծը (պատվիրատու՝ «Սիփան հյուրանոց» ՍՊԸ) մշակված է անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման N07052020-07-0091 վկայականի եվ ճարտարապետահատակագծային առաջադրանքի N19 13 մարտի 2019թ. համաձայն:

2. Հողամասի մակերեսը կազմում է 0,767136 հա, որտեղ գոյություն ունի պահակատուն՝ 18,0 ք.մ. եվ ջրավազան՝ 75,8 ք.մ.:

3. Բնակելի թաղամասը կազմված է երեք միմիանց նկատմամբ շախմատաձեղ դասավորված կետային, սեկցիոն տիպի բարձրահարկ բնակելի շենքերից (14 հարկ), երեք ստորգետնյա ավտոկայանատեղից: Այստեղ նախագծված են նաեվ զբոսայգի, առանձին կանաչապատ տարածքներ եվ հանգստի գոտիներ: Վերջիններս նախատեսված են ակտիվ եվ պասիվ հանգստի համար:

4. Բնակելի շենքերի դասավորությունը պայմանավորված է.

ա) հողամասի դիրքով

- բ) հեռավորությունների նորմատիվ պահանջներով
- գ) բնական լուսավորության հաշվարկներով
- դ) գոյություն ունեցող ծառերը պահպանելու նպատակով:

Բարձրահարկ բնակելի շենքերը մակնշված են Ա; Բ; Գ տատերով: Նրանցից Ա եվ Բ շենքերը կազմում են մեկ շրթա, իսկ Գ շենքը տեղադրված է վերջինների նկատմամբ շախմատաձեղ:

Շենքերի առջին հարկերը հատկացված են հասարակական նշանակության նպատակների համար /առևտրի կենտրոն/:

Շենքերի շքամուտքերը առանձնացված են հասարակական նշանակության սենքերից: Բոլոր մուտքերը ապահովված են թեքուղիներով:

Բնակելի հարկերը տիպարային են, բաղկացած երկու 4 սենյականոց, երկու 3 սենյականոց եվ երեք 2 սենյականոց բնակարաններից: Պատվիրատուի առաջարկով որոշ բնակարաններ միավորված են:

Վերելակները յուրաքանչյուր շենքում երկուսն են՝ 400 եվ 1000 կգ բեռնամբարձությամբ: Նրանցից 1000 կգ-անոցը նախատեսված է հրշեջ ստորաբաժանում տեղափոծելու համար: Աստիճանավանդակի եվ վերելակների նախասրահի դռները պետք է լինեն ինքնափակվող, հակահրդեհային եվ հերմետիկ: Վերելակների նախասրահում դուռ չի նախատեսված ծխահեռացման հոսքերի կազմակերպման համար: Միջանցքները սարքավորված են ծխահեռացման համակարգով: Բնակարանների բոլոր սենքերում (սենյակներում) նախատեսվում են հրդեհի ազդանշման տվիչներ:

Մեքենաների մուտքը ստորգետնյա ավտոկայանատեղի երկկողմանի է, բաց թեքահարթակներով, լուսացույցային կարգավորումով:

5. Ըստ պատվիրատուի հայացողության բոլոր շինությունների շինարարական աշխատանքները իրականացնվելու են միաժամանակ:

6. Բնակելի շենքերի կոնստրուկտիվ համակարգը շրջանակակապային է: Շենքերի միջեվ ստորգետնյա ավտոկայանատեղիների կոնստրուկտիվ համակարգը շրջանակային: Կից շինությունները միմյանցից առանձնացված են հակասեյսմիկ կարերով:

7. Շենքերի սեյսմազինվածության մակարդակը նախատեսված սեյսմիկ - III գոտու համար (9 բալ եվ ավելի)

8. Ստորգետնյա ավտոկայանատեղիների բարձրությունները տրված են բացարձակ նիշերով: Բնակելի շենքերի 1-ին հարկերի հատակներից վերեվ բարձրությունները տրված են պայմանական նիշերով:

Մ՝ շենքի հարկի 1-ին հարկի հատակի պայմանական 0.00 նիշը համապատասխանում է 1 401.600 բացարձակ նիշին;

Բ՝ շենքի հարկի 1-ին հարկի հատակի պայմանական 0.00 նիշը համապատասխանում է 1 402.000 բացարձակ նիշին;

Գ՝ շենքի հարկի 1-ին հարկի հատակի պայմանական 0.00 նիշը համապատասխանում է 1402.850բացարձակ նիշին;

9. Պատերը - նախատեսվում են իրականացվել պեմզաբլոկներով, արտաքինից երեսապատումը բազալտե եվ տուֆե սալերով, ցեմենտոբոթոլով: Ըստ պատվիրատուի

ցանկության հնարավոր են նաեվ երեսապատման այլ նյութերի կիրառում, որոնք չեն հակասում ՀՀ գործող շինարարական նորմերին

10. Ծածկերը -ե/բ միաձույլ սալեր

11. Միջնորմները - պեմզաբլոկ, գիպսաստվարաթուղթ

12. Տանիքը - հարթ-համատեղված, ճկուն փաթթոցային ծածկույթով եվ կազմակերպված ջրահեռացումով

13. Հատակները կառուցել բոլոր միջհատակային հաղորդագծերը տեղադրելուց հետո

14. Համաշինարարական աշխատանքները կատարել հծռկ 3.03.01-87-ով նախագիծը մշակված է համաձայն

ՀՀՇՆ 30-01-2014 քաղաքաշինություն. քաղաքային եվ գյուղական բնակավայրերի հատակագծում եվ կառուցապատում

ՀՀՇՆ 31-01-2014 բնակելի շենքեր. մաս1 .բազմաբնակարան բնակելի շենքեր

ՀՀՇՆ 21-01-2014 շենքերի եվ շինությունների հրդեհային անվտանգություն


ՀՀՇՆ iv-11.03.03-02 ավտոկայանատեղեր

ՏԵԽՆԻԿԱՏՆԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

- ՀՈՂԱՄԱՍԻ ՄԱԿԵՐԵՍ 7671.36 ՔՄ
- ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՄՆԵՐ - 1458 ՔՄ
- ԱՍՖԱԼՏԱՊԱՏՈՒՄ 270 ՔՄ
- ՍԱԼԻԿԱՊԱՏՈՒՄ 922.7ՔՄ
- ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿ 160.5ՔՄ
- ԿԱՆԱՉԱՊԱՏ ՏԱՐԱԾՔ 4860.16 ՔՄ

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ, որի համար ընկերության կողմից կմշակվի համապատասխան բարեկարգման, կանաչապատման և արդիականացման դենդրոնախագիծ:

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է շրջակա կառույցներին տվյալ միջավայրում և չի հանդիսանում վիզուալ տեսադաշտի խոչնդոտ շրջակա բնակչության համար:




ԵՆԱԿԵՏԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԵՎ ՀՈՂԱՐԱՏՎԱՅՈՒՄ Մ 1:500


ՔԱՐԿԱՑԱԾ, ԵՄԲԵՍԱՊԵՏՈՒՄ, ՀՊՂԱՐԱՏՎԱՅՈՒՄ 37 ՀԱՅՑԻՄ ԲԱՏՄԱՆԱԿԱՆ ԵՎ ԵՆԱԿԵՏՈՒՄ ԿՐԻՍՏՈՒՄ ԿԱՌԱՅՈՒՄ ԿԱՌԱՅՈՒՄ ԿԱՌԱՅՈՒՄ ԿԱՌԱՅՈՒՄ		ՊՐՈԿՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՌԱՅՈՒՄ	ՎԵՐԻՖԻԿԱՆ ԿԱՌԱՅՈՒՄ
ՄՈԸ ՏՆՕՐԵՆ	Մ. ՍՐԱԿՅԱՆ	Մ. ՍՐԱԿՅԱՆ	Մ. ՍՐԱԿՅԱՆ
ՆԱԳԵ	Մ. ՍՐԱԿՅԱՆ	Մ. ՍՐԱԿՅԱՆ	Մ. ՍՐԱԿՅԱՆ
ԵՄՏՐԱՊՈՒՄԵՆ	Մ. ՍՐԱԿՅԱՆ	Մ. ՍՐԱԿՅԱՆ	Մ. ՍՐԱԿՅԱՆ
ՔԱՐԿԱՑՈՒՄ ԿԱՌԱՅՈՒՄ ԿԱՌԱՅՈՒՄ ԿԱՌԱՅՈՒՄ ԿԱՌԱՅՈՒՄ ԿԱՌԱՅՈՒՄ		ՊՐՈԿՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՌԱՅՈՒՄ	ՎԵՐԻՖԻԿԱՆ ԿԱՌԱՅՈՒՄ
ԵՆԱԿԵՏՈՒՄ ԿԱՌԱՅՈՒՄ ԿԱՌԱՅՈՒՄ ԿԱՌԱՅՈՒՄ ԿԱՌԱՅՈՒՄ ԿԱՌԱՅՈՒՄ		ՊՐՈԿՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՌԱՅՈՒՄ	ՎԵՐԻՖԻԿԱՆ ԿԱՌԱՅՈՒՄ
ՄԱՍՏՈՒՄ ԿԱՌԱՅՈՒՄ ԿԱՌԱՅՈՒՄ ԿԱՌԱՅՈՒՄ ԿԱՌԱՅՈՒՄ ԿԱՌԱՅՈՒՄ		ՊՐՈԿՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՌԱՅՈՒՄ	ՎԵՐԻՖԻԿԱՆ ԿԱՌԱՅՈՒՄ

ՍԱԽԱԿ - 6		ՏՈՒՆ	ԵՐԿՐ	ԵՐԿՐ
Ն.Ս.Գ.	Ս. ՍՐԱԿՅԱՆ	Ս. ՍՐԱԿՅԱՆ	Ս. ՍՐԱԿՅԱՆ	Ս. ՍՐԱԿՅԱՆ
Ն.Ս.Գ.	Ս. ՍՐԱԿՅԱՆ	Ս. ՍՐԱԿՅԱՆ	Ս. ՍՐԱԿՅԱՆ	Ս. ՍՐԱԿՅԱՆ
ՍՐԱԿՅԱՆ	Ս. ՍՐԱԿՅԱՆ	Ս. ՍՐԱԿՅԱՆ	Ս. ՍՐԱԿՅԱՆ	Ս. ՍՐԱԿՅԱՆ
ՍՐԱԿՅԱՆ	Ս. ՍՐԱԿՅԱՆ	Ս. ՍՐԱԿՅԱՆ	Ս. ՍՐԱԿՅԱՆ	Ս. ՍՐԱԿՅԱՆ
ՍՐԱԿՅԱՆ		ՍՐԱԿՅԱՆ		ՍՐԱԿՅԱՆ
ՍՐԱԿՅԱՆ		ՍՐԱԿՅԱՆ		ՍՐԱԿՅԱՆ
ՍՐԱԿՅԱՆ		ՍՐԱԿՅԱՆ		ՍՐԱԿՅԱՆ
ՍՐԱԿՅԱՆ		ՍՐԱԿՅԱՆ		ՍՐԱԿՅԱՆ
ՍՐԱԿՅԱՆ		ՍՐԱԿՅԱՆ		ՍՐԱԿՅԱՆ

Գլխավոր հատակագիծ



Կոտայքի մարզ
Արուսյան քաղաք
Հատված կադաստրային քարտեզից
Կադաստրային ծածկագիր՝ 07-002-0047-0015
Մասշտաբ 1: 1000



2. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԽԵՄԱՆ

Որպես շինարարական դիտարկվելու է ամբողջ հողատարածքը:

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների վերաբերյալ:

Բոլոր տիպի շին. մոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից, հատկապես ակտավորելով թաքնված աշխատանքների իրականացումը, գրանցելով վարման մատյանում:

Շին. հրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից տրված հրահանգների:

Շին. հրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ զերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտաթորումներից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1©Աշխատանքների բնույթից ելնելով^ա բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված:

2©Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված (ընդհանրացված) տիպի ավարտուն շինարարական արտադրանքի« աշխատանքների ընդհանրացված փուլի» կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով:

3©Բրիգադների քանակական և մասնագիտական - որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների« աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1©Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ« կոշիկ)« համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում« լուսավորում« օդափոխում« պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն)« սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով^ա գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան

2©Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

3©Աշխատանքի պաշտպանության^a անվտանգության տեխնիկայի« արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

4.Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման« հրահանգման ժամանակին և որակով անցկացման« անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման« արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:

Անհրաժեշտ է ավելի հետևողական մշտադիտարկումներ իրականացնել շինարարական գործունեության ոլորտում՝ արձանագրելով շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների հնարավոր անհամաչափությունները:

2.1 Շինարարության ժամկետները

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է ՄՆԻՊ 1.04.03-85 «Շինարարության տևողության և նախապատրաստման նորմերի շենքերի և կառուցվածքների շինարարությունում» հիման վրա՝ հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոստրուկտիվ բնութագիրը, մակերեսը, ընդհանուր շինարարական ծավալը :

- Թվով 3 շենքերի բնակելի մասի մակերեսը -----≈ 20460.0 ք.մ.
- Ավտոտնակներ -----≈ 1446.0 ք.մ.
- Առևտրահասարակական տարածքներ -----≈ 1024.0 ք.մ.
- Ընդհանուր օգտագործման տարածքներ -----≈ 1975.0 ք.մ.

Շինարարության տևողությունը կկազմի—26.4 ամիս կամ 792

Հաշվի առնելով գործնական շինարարության տվյալները աշխատանքային ծախսումները կկազմեն 26.4*30*60=47520 մարդ-հերթափոխ:

2.2 Առաջարկություններ շինարարության հրապարակի կազմակերպման և բեռնամբարձ մեխանիզմների օգտագործման վերաբերյալ

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունը կարելի է իրականացնել ավանդական եղանակներով^a կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում, վարձակալել դրանք այլ կազմակերպություններից:

Որպես հիմնական մոնտաժային միջոցներ ընտրվել են Liebherr 132 EC-H8(200HC) և Liebherr 154 HC վերամբարձ կռունկները կամ համարժեք պարամետրերով/թվով 2 հատ/:

Ժամանակավոր շինությունների, կռունկների, պահեստավորման մակերեսների, ժամանակավոր ցանցերի տեղակայումը պատկերված է շինարարական գլխավոր հատակագծի վրա:

Ժամանակավոր շինությունների ցանկը և դրանց տեղակայումը պետք է ճշտվեն տեղում և համաձայնեցվեն պատվիատուի հետ:

Ժամանակավոր էլեկտրամատակարարումը և ջրամատակարարումը հարմար է իրականացնել շին հրապարակի գոյություն ունեցող ցանցերից:

2.3 Շինմոնտաժային աշխատանքների իրականացման եղանակները

Շինարարության նախապատրաստական փուլում իրականացվում են հետևյալ աշխատանքները.

- տարածքի համահարթում (հողային աշխատանքներ);
- շին հրապարակի պարագծով գոյություն ունեցող ցանկապատի լրացում և նորոգում;
- ժամանակավոր ցանկապատի տեղադրում;
- տարածքում հին, շարքից դուրս եկած շինվածքների (եզրաքարեր, սալվածքներ, արտաքին աստիճաններ և այլն) քանդում;
- կոմունիկացիաների տեղափոխում / անհրաժեշտության դեպքում/;
- ժամանակավոր շինությունների տեղադրում;
- միացում գոյություն ունեցող կոմունիկացիաներին:

Հողային աշխատանքներն նախատեսվում է իրականացնել մեքենայացված եղանակով՝ EK-18 և ZX50U-2 տիպերի էքսկավատորներով՝ դժվար հասանելի մասերում՝ ձեռքով:

Մշակված գրունտը պահպանվում է փորվածքների ետլիցքի նպատակով, մյուս զգալի մասը՝ տեղափոխվում:

Ետլիցքը անհրաժեշտ է իրականացնել շերտային տոփանմամբ ծանր տոփանիչներով կամ CR 3/60 տիպի տոփանիչներով, իսկ շինարարական կոնստրուկցիաների անմիջական մերձակայքում՝ ձեռքի տոփանիչներով:

Համահարթման և արտաքին ետլիցքի ժամանակ առաջարկվում է կիրառել T-130 բուլդոզեր:

Միաձույլ բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների իրականացման համար նպատակահարմար է գույքային կաղապարամածի կիրառումը:

Կոնստրուկցիաների ամրանավորումը առաջարկվում է իրականացնել ինչպես առանձին ձողերով, այնպես էլ ամրանային կմախքներով և ցանցերով: Բետոնացումից առաջ անհրաժեշտ է ստուգել ամրանի, միջադիրների և կաղապարամածի տեղադրման ճշտությունը, ամրանը, պետք է մաքրված լինի կեղտից և ժանգից:

Բետոնի խտացումը անհրաժեշտ է իրականացնել խորքային և մակերեսային թրթրիչներով:

Բետոնախառնուրդի առաքումը նպատակահարմար է KamAZ—53229 ABC 7 ավտոբետոնախառնիչով՝ ավտոբետոնապոմպի կամ վերամբարձի միջոցով տեղադրման վայր հետագա տրամաբ: Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույց չի նախատեսվում: Բետոնի շաղախը մատակարարվելու է մասնագիտացված ընկերության կողմից:

Միաձույլ կոնստրուկցիաների իրականացումը նպատակահարմար է իրականացնել անջատ եղանակով: Առաջարկելի է տիպարային տեխնոլոգիական քարտերի կիրառումը:

Մարդկանց շարժումը բետոնացված մակերևույթների վրա և կաղապարամածի տեղադրումը թույլատրվում է բետոնի 1.5 ՄՊա ամրության ձեռք բերումից հետո:

Հիմքի, սյան կաղապարամածի քանդումը թույլատրվում է բետոնի նախագծային 70% ամրություն ձեռք բերումից հետո, ծածկի համար՝ 80%:

Հակահրդեհային նպատակներով ջրի պահանջարկը 15 լ/վրկ:

2.4 Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա: Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1 Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկ

NN	Անվանում	Մակնիշ	Քանակ
1	Էքսկավատոր	KOMATSU PC 400-7	2
2	Բուլդոզեր	KOMATSU D37-EX-22	1
3	Շարժական կոմպրեսոր	ЗИФ-55В	1
4	վերամբարձ ավտոկռունկ	Галичанин КС-65713-1	1
5	Աշտարակային կռունկ	TEREX CTT 91-TS12	1
6	Տոփանիչ	CR 3/60	2
7	Գույքային կաղապարամած	կոմպլ.	1
9	Թրթրիչ խորքային էլեկտրական	ИБ-102А	2
10	Փոխարկիչ թրթրիչների համար	ИБ-4	2
11	Եռակցման տրանսֆորմատոր	СТН-500	2
12	Դակիչ ձեռքի էլեկտրական	ИЭ-4709А	3
13	Ձեռքի էլեկտրական դուր	ИЭ-1208Э	3
14	Հղկող մեքենա	ИЭ-2201	3
15	Թրթրագլղոն	НАМИ 3410	1
16	Ավտոբետոնախառնիչ	СБ-69Б	հաշվարկով
17	Ավտոբետոնատար	КрАЗ-65055	հաշվարկով
18	Ինքնաթափ ավտոմոբիլ	МАЗ-5550	հաշվարկով

2.5 Հիմնական շինարարական աշխատանքների և ռեսուրսների ծավալները

Հողային աշխատանքներ՝

Հանույթ՝ 15450մ³

Հետլիցք՝ 4650մ³

Ավելացած հողային զանգվածը կտեղափոխվի ք. Աբովյանի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված վայր, համապատասխան թույլտվություն ստանալուց հետո:

2.6 Նյութերի և բնարեսուսների օգտագործում

a)Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{\Sigma. i} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 12 մարդ

N– ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n₁– սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 65 մարդ

N₁ – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 792 օր

$$W_{\Sigma. i} = (12 \times 0.016 + 65 \times 0.025) \times 792 = 1439 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 1.8 \text{ մ}^3/\text{օր:}$$

b) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$$U_1 = S_1 \times K_1 \times T, \text{ որտեղ՝}$$

S₁ – ջրվող տարածքի մակերեսը, 500 մ²,

K₁ – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0015 մ³,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 300

$$U_1 = 500 \times 0.0015 \times 300 = 225 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 0.75 \text{ մ}^3/\text{օր}$$

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 1664 մ³/շին. ժամ:

Ջրամատակարարումը կիրականացվի է կառուցապատման ենթակա տարածքում գոյություն ունեցող ջրագծից, պայմանագրային հիմունքներով: Կոյուղին կմիացվի համայնքային կոյուղատարին:

Բանվորկան և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար շինհրապարակում կտեղադրվեն ժամանակավոր սանհանգույցներ, որոնք շինաշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն:

Շինհրապարակում սանիտարական կանոնները և նորմերը պահպանվելուն են համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N15-Ն հրամանի համաձայն:

2.7 Ներքին ցանցեր

Բազմաֆունկցիոնալ բնակելի շենքերի ներքին ջրամատակարարման և ջրահեռացման աշխատանքային նախագիծը մշակվել է համաձայն առաջադրանքի, ճարտարապետաշինարարական գծագրերի և ՀՀ տարածքում գործող շինարարական նորմերի և կանոնների:

Նախագծվել են ներքին ջրամատակարարման և կոյուղու հետևյալ համակարգերը.

1. Խմելու- տնտեսական հակահրդեհային ջրմուղ;
2. Տնտ- կենցաղային կոյուղի;
3. Հակահրդեհային ջրմուղ ավտոկայանատեղիի համար;
4. Տարափային (հեղեղային) ջրահեռացման համակարգ ;
5. Ներքին դրենաժ

ԽՄԵԼՈՒ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

Բազմաբնակարան բնակելի Ջրամատակարարումը կիրականացվի է կառուցապատման ենթակա տարածքում գոյություն ունեցող ջրագծից, պայմանագրային հիմունքներով: Կոյուղին կմիացվի համայնքային կոյուղատարին:

Համակարգը նախատեսված է մնակելի շենքերի խմելու-տնտեսական հակահրդեհային կարիքների համար:

Ջրի մուտքը նախատեսվում է ներհրապարակային ջրմուղի խմելու-տնտեսական հակահրդեհային ցանցից $2dy=100$ մմ մուտքագծով: Յուրաքանչյուր շենքի մուտքագծի վրա նախատեսվում է ֆիլտր $dy=80$ մմ և ջրաչափ $dy=50$ մմ: Համակարգը նախատեսված է պողպատե էլեկտրաեռակցվող խողովակներից $d=89 \times 3.0$ մմ:

Պողպատե խողովակները ներկվում և ջերմամեկուսացվում են:

ՏՆՏ-ԿԵՆՑԱԴԱՅԻՆ ԿՈՅՈՒԴԻ

Համակարգը նախատեսված է մնակարանների և հասարակական մասի սանիտարատեխնիկական սարքերից տնտ-կենցաղային կեղտաջրերի հեռացման համար: Շենքից կեղտաջրերի հեռացումը կատարվում է լայն ցանց, որտեղից քաղաքային կոյուղու համակարգ: Ընդունվել են կոյուղու պոլիվինիլքլորիդե $dy=100$ մմ խողովակներ: Խողովակներ մեկուսացվում են հրակայուն մեկուսիչներով և փաթաթվում են ֆոլգայով և ամրակապվում:

ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ՋՐՄՈՒՂ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻ ՀԱՄԱՐ

Համակարգը նախատեսված է ավտոկայանատեղի հակահրդեհային կարիքների համար: Հրդեհամարումը նախատեսվում է պահարաններում տեղադրված հակահրդեհային

ծորակներով (2 շիթ, յուրաքանչյուրը 5,0 լ/վրկ): Յուրաքանչյուր պահարանում նախատեսվում է նաև 2 հատ փրփուրե կրակմարիչ: Ջրի մուտքը ավտոկայանատեղի համար նախատեսվում է ներհրապարակային ջրմուղի հակահրդեհային ցանցից $dy=100$ մմ մուտքագծով: Ցանցը օղակային է, նախատեսված է պողպատե էլեկտրատեղակայվող խողովակներից $d=108 \times 4.0$ մմ, $d=89 \times 3.0$ մմ, $d=76 \times 3.0$ մմ: Պողպատե խողովակները ներկվում են:

ՏԱՐԱՓԱՅԻՆ (ՀԵՂԵՂԱՅԻՆ) ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Համակարգը նախատեսված է կառույցի տանիքից ձնհալքի և անձրևաջրերի հեռացման համար: Ջրերի հեռացումը կատարվում է լակային ցանց, որտեղից միացվում է հեղեղատային կոյուղու բակային համակարգին: Ընդունվել են կոյուղու պոլիվինիլքլորիդե $dy=100$ մմ և $dy=150$ մմ խողովակներ: Խողովակները մեկուսացվում են հրակայուն մեկուսիչներով և փաթաթվում են ֆոլգայով և ամրակապվում: Շենքերից հեռացնող ցանցի ավտեկայանատեղիով անցնող հատվածը նախատեսվում է պողպատե էլեկտրատեղակայվող խողովակներից $d=108 \times 4.0$ մմ և ներկվում է: Բնահողի մեջ անցնող խողովակները ենթարկվում են ուժեղ հակակոռոզիոն մեկուսացման:

ՆԵՐՔԻՆ ԴԲԵՆԱԺ

Նախատեսված է կառույցի ավտոկայանատեղիի հրդեհամարման ժամանակ գոյացած ջրերի հեռացման համար: Ավտոկայանատեղիում՝ փոստրակում նախատեսվում է 2 հատ դրենաժային պոմպ (1աշխատող , 1 պահեստային) $Q=36$ խմ/ժամ, $H=5,0$ մ: Դրենաժային ջրերը մղվում են մթնոլորտային կեղտաջրերի կոյուղու բակային համակարգ: Համակարգը նախատեսված է $dy=150$ մմ պոլիէթիլենե և $dy=100$ մմ պողպատե խողովակներից: Պողպատե խողովակները յուղաներկվում են բնահողի մեջ անցնող խողովակները ենթարկվում են ուժեղ հակակոռոզիոն մեկուսացման:

2.8 *Էլ. մատակարարում*

Բազմաբնակարան բնակելի շենքերի և առևտրի կենտրոնի շինարարական աշխատանքների 0.4կՎ էլեկտրամատակարարումն հնարավոր կլինի իրականացնել Արմվյան թիվ 3638; 250կՎա ՏԵ-ի 0.4կՎ բաշխիչ վահանից, կառուցելով 0.4կՎ օղային գիծ:

Շահագործման ընթացքում համալիրի էլեկտրամատակարարման նպատակով ընկերությունը կդիմի ՀԵՑ ՓԲԸ-ին համապատասխան տեխնիկական պայման ստանալու համար:

2.9 *Գազամատակարարում*

Բազմաբնակարան բնակելի շենքերի և առևտրի կենտրոնի գազամատակարարման նպատակով ընկերությունը կդիմի «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ին համապատասխան տեխնիկական պայման ստանալու համար:

Բնակելի համալիրի ջերմամատակարարման համար կաթսայատուն չի նախատեսվում, ջերմամատակարարումը իրականացվելու է անհատական:

2.10 Կանաչապատման աշխատանքներ

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի կանաչապատում:

Կանաչապատումը նախատեսվում է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմանների բնորոշ ծառաթփային բուսականությամբ: Բուսականության տեսակային և քանակային կազմը՝

- ԹՂԿԻ ՍՐԱՏԵՐԵՎ ԿԱՐՄԻՐ - 18 հատ
- ՖՈՐՁԻՑԻԱ - 41 հատ
- ԳՆԴԱՁԵՎ ԻԼԵՆԻ - 36 հատ
- ԳՆԴԱՁԵՎ ՍԱՄՇԻՏ - 29 հատ
- ԿԱՏԱԼՊԱ - 5 հատ
- ՀՈՒԴԱՅԱԾԱՌ - 9 հատ
- ՍՅՈՒՆԱՁԵՎ ԹՈՒՅԱ - 54 հատ
- ՓՈՎՈՂ ԳԻՀԻ - 13 հատ
- ՁԻԱԿԱՍԿ - 11 հատ
- ԴՐԱԽՏԱԾԱՌ - 5 հատ
- ՍԱԿՈՒՌԱ - 8 հատ
- ԱՍՊԻՐԱԿ - 61 հատ
- ԲԱՐԲԱՐԻՍ - 21 հատ
- ԿՈՒՍԱԽԱՂՈՂ - 918 մ²
- ՍԱՄՇԻՏ - 1222 զմ
- ԾԱՂԿԱՆՈՑ - 140 մ²
- ՍԻՉԱՄԱՐԳ - 4251 մ²

Նախքան ծառատնկման աշխատանքների սկսելը անհրաժեշտ է կանաչապատվող տարածքում իրականացնել հետևյալ ագրոմելիորատիվ միջոցառումները.

- Ոռոգման ջրինայող համակարգի անցկացում,
- Համաձայն ծառագիտական նախագծի համարակալված ցցափայտերի օգնությամբ ծառերի ու թփերի փոսերի տեղի նշահարում,
- Ծառերի համար 1մ խորությամբ և 50սմ լայնության փոսերի պատրաստում ,
- Թփերի համար 50-60սմ խորությամբ և 40սմ լայնության փոսերի պատրաստում,
- Բոլոր փոսերի մոտ համարժեք ծավալի հողախառնուրդի կուտակում.

պատրաստված 3 բաժին սևահողից, 1 բաժին կարմիր ավազից, 1 բաժին տորֆահողից և 0.5 բաժին փտած գոմաղբից, վրան ավելացնել մուլչ:

Ագրոտեխնիկական միջոցառումների ավարտից հետո խորհուրդ է տրվում նշված տարածքում ծառատնկն իրականացնել ուշ աշնանը կամ վաղ գարնանը: Տնկանյութը ծառերի դեպքում պետք է լինի 1.52-2.0մ, թփերի դեպքում՝ 0,5-0,8մ: Տնկանյութը կարելի է ձեռք բերել անտառային և դեկորատիվ տնկարաններից: Որպեսզի պաշտպանիչ կանաչ գոտում խոտածածկ առաջանա անհրաժեշտ է 1 ք.մ.-ում նախատեսվում է ցանել 0,04 կգ խոտի սերմ: Ծառատնկման հաջորդ 3 տարիներին խորհուրդ է տրվում վեգետացիայի ընթացքում 2-3 անգամ իրականացնել խնամքի (քաղհան, փխրեցում) աշխատանքներ,

անհրաժեշտության դեպքում նաև վնասատուների նկատմամբ թունաքիմիկատներով կամ կենսաբանական պայքարի միջոցառումներ:

Նախատեսվում է կազմակերպված ոռոգման ցանց: Ցանցում առկա են կաթիլային ոռոգման հանգույցներ, նաև նախատեսված են ռետինե խողովակներ ամբողջությամբ ոռոգում կազմակերպելու համար: Կանաչապատ տարածքների ոռոգումն ջուր կմատակարարվի հատուկ ավտոմեքենաներով, պայմանագրային հիմունքներով կամ ցանցը կմիացվի մոտակա ոռոգման ցանցին:

2.10.1 Կանաչ տարածքի ոռոգման ջրապահանջի հաշվարկ

Կանաչապատ տարածքի 1 մ²-ի մեկ ոռոգման համար ջրի ծախսի նորման կազմում է 4-6 լ/ մ²:

Տեղանքի շոգ կլիմայական պայմանների համար ընդունում ենք առավելագույն արժեքները.

գազոնների ոռոգում՝ $n_6 = 0.006 \text{ մ}^3/\text{մ}^2$

Ոռոգման համար ջրապահանջը որոշվում է՝

$$W_{u.3} = (n_6 \times S) \times K \times t$$

որտեղ՝ S – ոռոգվող տարածքի մակերեսն է, գազոնների մակերեսը՝ $S_1 = 5190 \text{ մ}^2$,

K – ոռոգման օրական հաճախականությունն է, $K = 2$

t - ոռոգման օրերի պլանավորված թվաքանակն է, $t = 175$ օր

$$W_{u.3} = (0.006 \times 4860.16) \times 2 \times 175 = \underline{\underline{10206.336}} \text{ մ}^3/\text{տարի}$$

3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅՂ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՆՄԱՆ

Բազմաբնակարան բնակելի շենքերի և առևտրի կենտրոնի կառուցապատման համար նախատեսված տարածքը գտնվում է Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հրապարակ, թիվ 3/1 հասցեում:

3.1 Ինժեներաերկրաբանական պայմաններ

Մորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքը գտնվում է Քանաքեռի հրաբխային սարահարթի վրա, որն ունի բլրոտ ռելիեֆ: Միաժամանակ ուսումնասիրվող տարածքը հանդիսանում է Գեղամա լեռնաշղթայի հարավ-արևմտյան նախալեռնային մասը, և տեղակայված է ջրառատ Հրազդան գետի կիրճի ձախափնյա մասում:

Օրոգրաֆիկ տեսակետից ուսումնասիրվող տարածքը իրենից ներկայացնում է բլրակային բազալտային սարահարթ: Նրա տարրերն են հանդիսանում.

ա) ջրբաժան սարահարթը, որը տարածվում է հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելք, Մհուր գյուղից հյուսիս-արևելք և Էլար գյուղից հարավ:

Նմանատիպ ջրբաժան սարահարթ նկատվում է նաև ուսումնասիրվող տարածքի հյուսիսային եզրամասում, Արզնի գյուղից հարավ:

Ուսումնասիրվող տարածքի արևելյան մասի ռելիեֆը, Գեղամա լեռնաշղթայի ստորոտից արևմուտք, նույնպես ունի սարահարթաձև տեսք:

Սարահարթը ունի շատ կտրուկ լանջեր և շերտավորված է չեչոտ դոլերիտային բազալտների ծածկոցով:

բ) Ջրբաժան սարահարթի հարավային, հարավարևմտյան և արևմտյան հարթ լանջերին;

գ) Թույլ բլրակային հարթավայր, որը տեղակայված է ջրբաժան սարահարթից հյուսիս, հարավ և արևմուտք:

Հյուսիսում և հյուսիս-արևմուտքում հարթավայրը փոխարկվում է սարահարթի, բարձրանալով նշած հարթավայրի 20մ-ից մինչև 50մ: Այստեղ գրունտները հիմնականում ներկայացված են կավավազափոշենման կարբոնատացված նյութով, խճամանրախճային միացությամբ: Տեղ-տեղ գերակշռում են կավավազափոշենման լցանյութով խճամեծաբեկորային գրունտները:

դ) Փոքր բարձրացումներ, որոնք արտահայտվում են վերջին 2 ստորաբաժանումների ֆոնի վրա: Բարձրացումները ունեն գմբեթավոր տեսք և շերտավորված են բազալտի ծածկոցով:

Շրջանի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են օլիգոցենի դոլերիտային բազալտները, որոնք տեղադրված են երրորդական նստվածքային ապարների տակ: Դոլորիտային բազալտային լավաները ռելիեֆի իջնող մասերում ծածկված են դեյուվիալ գոյացումներով:

Գրունտային ջրերը ուսումնասիրվող տարածքի սահմաններում տարածվում են 10-20մ և ավելի խորությունում, և միայն ոչ մեծ տեղամասում, որը տեղակայված է Մհուր գյուղից հյուսիս-արևելք և հարում է Եղունարխ հարթավայրին, գրունտային ջրերը գտնվում են 2-5մ խորությունում:

Երկրաբանական տեսակետից տարածքում զարգացած են չորրորդական (Q1-Q4) դելյուվիալ-պրոլյուվիալ, էյուվիալ գոյացումները՝ ներկայացված կավավազային և խոշորաբեկորային գրունտներով, որոնք ծածկում են հրաբխային ապարները՝ ներկայացված պլիոցենյան հասակի (βN2) անդեզիտա-բազալտներով, դոլերիտային բազալտներով և խարամներով:

Հորատված հորատանցքերի հիման վրա N 7 և 8 նախագծվող միկրոշրջանների տարածքը ներկայացված է հետևյալ լիթոլոգիա-երկրաբանական տարատեսակներով.

Ժամանակակից գոյացումներից (Q4) տարածքում բացահայտված է ԻԵԷ - 1՝ հողաբուսական շերտ, հզորությունը 0.3-0.4մ: Տարածված է ամենուրեք:

Չորրորդական դելյուվիալ-պրոլյուվիալ գոյացումներ (dp-Q1-Q3) ԻԵԷ - 2 կավավազ բաց մոխրագույն, բաց շագանակագույն, պինդից մինչև պլաստիկ կոնսիստենցիայի, կարբոնատային կեղևի ենթաշերտերով, խճով, խճավազով (20-25%): Շերտի հզորությունը 0.4-7.3մ: Տարածված է տարածքի հյուսիս-արևելյան և կենտրոնական մասերում:

Չորրորդական էյուվիալ գոյացումներ (e-Q1-Q3) ԻԵԷ - 3 Էֆֆուզիվ ապարների խճավազային գրունտ (բազալտների, անդեզիտա-բազալտների) 20-50սմ (5-10%) չափսի խարամացած և խիտ բազալտների բեկորներով, խճավազով (20-30%), կավավազային լցանյութով (20-30%): Շերտի հզորությունը 0.3-8.2մ: Տարածված է ամենուրեք, բացառությամբ տարածքի հյուսիսարևելյան գոտուն և ավտոմայրուղուն զուգահեռ:

Հրաբխային գոյացումներ (βN2)՝

- կիսաժայռային գրունտներ ԻԵԷ-4 խարամ հրաբխային, մուգ շագանակագույն, խճա-խճավազային կազմի 30-80սմ (10-20%) չափսի խարամացած բազալտների բեկորներով հրաբխային ավազներով և մոխիրով (20-30%): Շերտի հզորությունը 6.5մ: Տարածված է ամենուրեք, բացառությամբ տարածքի կենտրոնական մասից:

- Ժայռային գրունտներ ԻԵԷ-5 անդեզիտաբազալտներ, դոլերիտային բազալտներ, պինդից մինչև կիսապինդ, թույլ հողմնահարված, ճեղքավորված արմատական տեղադրման: Բացված հզորությունը 9.0մ: Տարածված է ամենուրեք, բացառությամբ կենտրոնական մասի երկու տեղամասերի:

Հիդրոերկրաբանական տեսակետից ուսումնասիրվող տարածքը իրենից ներկայացնում է լավ դրենաժացված տարածք, որի աերացիայի գոտին կազմում է 15-20 և ավելի մետր:

Մինչև 15մ խորությամբ հորատված հորատանցքերով տարածքի ստորերկրյա ջրերը բացված չեն:

Ստորև բերվում են դրանց ֆիզիկամեխանիկական ցուցանիշները.

1. **Հողաբուսական շերտը** իր փոքր հզորությամբ ինժեներաերկրաբանական տեսակետից հետաքրքրություն չի ներկայացվում և չի դիտարկվում:

2. **Կավային գրունտ** - կավավազներ (ԻԵԷ-2)՝

Խտություն 1.80-1.84 գ/սմ³

Ծակոտկենության գործակից 0.84-0.90

Կոնսիստենցիայի ցուցանիշ 0.04-0.36

Ներքին շփման անկյուն 18-21°

Տեսակարար շղթայացում 9-11 ԿՊա

Դեֆորմացիայի մոդուլ 8-16 ՄՊա

Հաշվարկված դիմադրություն 150-250 ԿՊա

Ամրային-դեֆորմացիոն բնութագրերը և հաշվարկված դիմադրությունը բերված են համաձայն հճՌԿ 2.02.01-83:

3. **Խոշորաբեկորային գրունտներ** - ա) ԻԵԷ-3 ներկայացված են խճա-խճավազային գրունտով`

Խտություն 1.65-2.0 գ/սմ³ (համաձայն դաշտային որոշումների և գրականության տվյալների)

Դեֆորմացիայի մոդուլ 35-40 ՄՊա

Հաշվարկված դիմադրություն 150-250 ԿՊա (համաձայն հճՌԿ 2.02.01-83):

բ) ԻԵԷ-4 ներկայացված է հրաբխային խարամով խճախճավազային կազմի`

Խտություն 1.3-1.65 գ/

Դեֆորմացիայի մոդուլ 20-25 ՄՊա

Հաշվարկված դիմադրություն 150-250 ԿՊա (համաձայն հճՌԿ 2.02.01-83):

4. **Ժայռային գրունտներ** ԻԵԷ-5 ներկայացված է անդեզիտա-բազալտներով, դոլերիտային բազալտներով, թույլ հողմնահարված, ճեղքավորված, արմատական տեղադրման` Գրունտի խտությունը - $\rho=2.6$ գ/սմ³: Համաձայն НИИКС-ի և АрмНИИС-ի միասեռ սեղմման ամրության սահմանը ջրհագեցած վիճակում կազմում է $R_c^W=30-55$ ԿՊա, որն էլվերագրում է նրանց կիսապինդ և պինդ գրունտներին: Ջրհագեցության գործակիցը` $K_B=0.4$, փափկենության գործակիցը` $K_p=0.99$, որն էլ վերագրում է նրանց չկակող գրունտներին (համաձայն ГОСТ 25100-82):

4.1 Կլիմայական բնութագիր

Կլիմայական տեսակետից Արմվյան քաղաքի տարածքը մտնում է չափավոր ցուրտ ձմեռով և տաք ամառով բնորոշվող գոտու մեջ:

Տեղանքի կլիմայական պայմանները բերված են ըստ Եղվարդ օդերևութաբանական կայանի տվյալների:

Օդի միջին ջերմաստիճանը, °C

Աղյուսակ 2.1.

Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների												միջին տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
-5.1	-3.2	2.4	9.3	14.3	18.6	22.7	22.7	18.5	11.7	4.8	-1.9	9.6

Օդի հարաբերական խոնավության բնութագիրը ըստ Եղվարդ մետեոկայանի տվյալների բերված է աղյուսակ 2.2-ում:

Օդի հարաբերական խոնավությունը, %

Աղյուսակ 2.2.

Միջինը ըստ ամիսների, %												միջին տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
73	69	63	60	60	54	50	48	49	59	70	74	61

Տեղումների բնութագիրը ըստ Եղվարդ օդերևութաբանական կայանի տվյալների բերված է աղյուսակ 2.3-ում:

Տեղումների բնութագիրը

Աղյուսակ 2.3.

Տեղումների քանակը _____ միջին _____, մմ մաքսիմալ օրական												տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
34	36	43	58	64	39	23	13	16	39	36	35	436
30	28	42	40	42	29	53	45	35	39	37	28	53

Քամու ակտիվությունը ռեգիոնում ըստ Եղվարդ մետեոկայանի տվյալների բերված է աղյուսակ 2.4-ում:

Քամու բնութագիրը

Աղյուսակ 2.4.

ամիս	քամու կրկնվողությունն ըստ ուղղությունների և անդորրի, % քամու միջին արագությունը, մ/վրկ								
	Հս	ՀսԱրլ	Արլ	ՀվԱրլ	Հվ	ՀվԱրմ	Արմ	ՀսԱրմ	Անդորր
I	6	48	11	3	15	6	9	2	78
	1,7	1,8	1,7	1,5	1,7	1,9	1,8	1,7	
IV	5	48	7	3	17	10	8	2	50
	3,0	3,8	2,7	2,4	2,4	2,8	2,7	2,1	
VII	6	73	4	1	7	4	4	1	40
	4,9	5,5	4,9	1,7	3,0	2,5	3,0	1,8	
X	5	55	6	3	16	8	6	1	70
	2,7	3,1	2,1	1,9	1,9	2,3	1,8	2,2	

3.1.2 Կենսաբազմազանություն

Արբոլյան քաղաքի և դրա մերձավոր տարածքների կենսաբազմազանությունը ձևավորվել է ինչպես սեփական աշխարհագրական դիրքի, բնակլիմայական, ռելիեֆային և լանդշաֆտային պայմանների, այնպես էլ մերձավոր տարածքների ֆլորիստական շրջանների բուսական և կենդանական աշխարհների ազդեցության ներքո:

Համաձայն Ա. Մագակյանի հետազոտությունների, Աբովյան քաղաքը գտնվում է Գեղամա բուսաբանաաշխարհագրական ֆլորիստական շրջանում:

Բուսական աշխարհը սերտ կապված է բնակլիմայական, մորֆոլոգիական, աշխարհագրական և այլ պայմանների հետ, որոնք հստակեցնում են և կանոնավոր կերպով տարանջատում տարբեր տիպի ֆլորաների սահմանները: Համաձայն Ս. Դալի կենդանական աշխարհի տարածման սահմանները ավելի անորոշ են ու աղոտ, ավելի լայն և դժվար են սահմանազատվում շնորհիվ իրենց շարժունակության և ապրելաձևի առանձնահատկությունների (բնակալում, նստակյաց կամ չվող կենսակերպ, արտազոնալ բնակատեղերի առատություն):

Ինչպես բուսական, այնպես էլ կենդանական աշխարհի ներկայացուցիչների հիմնական մասը բնորոշ է միջին բարձրության լեռնային, տաք, չափավոր չորային կլիմայով տափաստանային լանդշաֆտային զոնային:

3.1.3 Բուսական աշխարհ

Բուսական աշխարհը ներկայացված է Գեղամա և Երևանյան ֆլորիստական շրջանների միջև ընկած սահմանային, միջին բարձրության լեռնային տափաստանային զոնայի տարածքներին բնորոշ բուսականության տեսակներով, որոնցում գերակշռում են հատիկա և հատիկա-տարազգի ներկայացուցիչները: Համաձայն նախկինում կատարված հետազոտությունների, այստեղ՝ անդեզիտա-բազալտային և տուֆա-լավային մայր ապարների վրա տարածված տարավազված տիպիկ և սովորական սևահողերով տափաստանային տարածքներում կարելի է հանդիպել մոտ 150 բուսատեսակ: Դրանցից, որպես դոմինանտ կամ բնորոշ տեսակներ կարելի է նշել Իժալեզվազգիներից - OPHIOGLOSSUM YULCATUM (իժալեզու հասարակ), նոճազգիներից - JUNICPERUS EXCELSA (զիհի բազմապտուղի), հովանոցազգիներից - OPOPAHAX PERSICUM (ճավշիր պարսկական), ցախակեռասազգիներից - SAMBUCUS TIGRANII (թանթրվենի Տիգրանի), ազգաթոփազգիներից - EMPERTRUM HERMAPHRODITUM (ակնաթուփ երկսեռ) Festuca sulkata (շյուղախոտ), Artemisia austriaca Jack. (բարձրավենյակ), Koeleria nitidula Vel. (կելերիա), Thymus-ի տեսակներ (ուրց), Aegilops cylindrical Host. (այծակն), Scabiosa virgata Grossh. (քոսքունկ), Achilea micranta M.B. (հազարատերևուկ) և այլն:

Մարդու գործունեության զարգացմանը զուգընթաց (հողերի գյուղատնտեսական օգտագործում, անասունների արածացում, տնտեսական գործունեություն և այլն) որպես կանոն կրճատվում է լանդշաֆտային զոնայի տեսակների ինչպես կազմը, այդպես էլ քանակը՝ ընդհուպ մինչև որոշ տեսակների իսպառ վերացումը: Մասնագետների կարծիքով այսօր Հայաստանում պահպանության կարիք ունի ֆլորայի տեսակների մոտ 50 տոկոսը:

Ստորև, աղյուսակում բերված են Աբովյան քաղաքի մերձավոր տարածքներում պահպանության կարիք ունեցող բուսատեսակները: Հարկ է նշել, որ աղյուսակը կազմված է ՀՀ բուսականության Կարմիր Գրքի հիման վրա, որում գրանցված են պահպանության կարիք ունեցող ֆլորայի 387 տեսակ (տեսակների ընդհանուր թվի 14 տոկոսը): Աղյուսակում բերված

Է նաև յուրաքանչյուր տեսակի պահպանության կարգավիճակը ըստ Կարմիր Գրքում կատարված դասակարգման (1- անհետացման վտանգի տակ գտնվող, 2 - հազվագյուտ):

Պահպանության կարիք ունեցող ֆլորայի տեսակները

աղյուսակ 4.3-1

Հ/հ	Բուսատեսակների անվանումը	Պահպանության կարգավիճակ	
	Լատիներեն	Հայերեն	
1	Centaurea Takhtajanii	Տերեփուկ Թախտաջյանի	1
2	Hieracium pannosum	Ճառակախոտ փրչոտ	1
3	Campanula Massalskyi	Զանգակ Մասալսկու	2
4	Cephalaria Tchihatchevii	Ջիվան Չիխաչովի	2
5	Astragalus Massalskyi	Գագ Մասալսկու	2
6	Aloea Sophial	Տուղտավարդ Սոֆիայի	1
7	Rheum Ribez L.	Խավրժիլ հազարջանման	1
8	Acantholimon avenaceum	Ոգնաթուփ վարսակային	2
9	Augeloass grassa	Այծակն հաստ	1
10	Scrophularia atropatana	Խլածաղիկ ատրոպատանյան	1
11	Erincium Wanaturii	Երջակ Վանատուրի	1
12	Sambucus Tigranii	Թանթրվենի Տիգրանի	2
13	Telephium olicispermum	Տելեփ սակավասերմ	2
14	Astragalus eriopidus	Գագ թավուտ	1

3.1.4 Կենդանական աշխարհ

Նկարագրվող տարածքում տարածված են միջին բարձրության (մոտ 1600 մ ծովի մակերևույթից բարձր) լեռնային տափաստաններին բնորոշ կենդանական աշխարհի ներկայացուցիչներ: Սակայն այստեղ հանդիպում են նաև արտազոնալ բնակավայրերին (կմախքային սարեր, քարաթափեր, ցանքեր, այգիներ, բնակավայրեր) բնորոշ տեսակներ: Համաձայն հրատարակված տվյալների, այս լանդշաֆտային զոնայում տարածված են 113 տեսակ ողնաշարավոր կենդանիներ (որոնցից 82-ը՝ հանդիպում են նաև արտազոնալ բնակատեղերում), այդ թվում՝ 28 (20) կաթնասուն, 67 (41)՝ թռչուն, 15 (8)՝ սողուն և 3 (3)՝ երկկենցաղ: Կաթնասունները առավել կերպով ներկայացված են կրծողներով, որոնց մի մասը վարում է ստորգետնյա կենսակերպ: Թռչունները ներկայացված են բաց տարածքներին բնորոշ տեսակներով: Սողունները և երկկենցաղները փոքրաքանակ են: Գարնան և աշնան սեզոններին այստեղ հանդիպում են բազմաթիվ չվանցող տեսակներ:

Տվյալ տարածքի դոմինանտ և բնորոշ տեսակներից կարելի է նշել Հայաստանում ամենուրեք տարածված *Crocidura* (սպիտակատամիկ), *Canis lupus* (գայլ), *Vulpes vulpes L.* (աղվես), *Cricetus auratus Nat.* (գերմանամուկ), *Mucrotus arvalis Pall.* (դաշտամուկ), *Perdix perdix L.* (կաքավ), *Grus grus L.* (կռունկ) և այլն:

Մարդու գործունեության հետ կապված բազմաթիվ պատճառներով (բուսականության վերացում, ոռոգում, ավտոճանապարհների և այլ գծային կառուցվածքների կառուցում, օգտակար հանածոների արդյունահանում և վերամշակում, որսագողություն և այլն) կենդանիների թիվը կրճատվել է և շարունակում է կրճատվել: Կենդանական աշխարհի պահպանության նպատակով դրանց զգալի մասը վերցված է հատուկ պահպանության տակ և գրանցված է Հայաստանի Հանրապետության, նախկին ԽՍՀՄ և Բնության Պահպանության Միջազգային Միության (ԲՊՄՄ) Կարմիր Գրքերում: Ստորև, աղյուսակում բերված են Կարմիր Գրքերում գրանցված կենդանիների տեսակները ըստ պահպանության կարգավիճակի (1- անհետացման վտանգի տակ գտնվող, հազվագյուտ, 2-անհետացող, կրճատվող):

Պահպանության կարիք ունեցող ֆաունայի տեսակները

աղյուսակ 4.4-1

հհ	Կենդանիների անվանումը		Գրանցման Կարմիր գրքի անվանում		
	Լատիներեն	Հայերեն	ՀՀ	ԽՍՀՄ	ԲՊՄՄ
1	Vormela peregusna	Հարավրուսական խայտաքիս	2	2	-
2	Circaetus gollicus Gmelin	Եվրոպական օձակեր	1	1	-
3	Luscinia svecica occidentalis	Իրանական կապտափող	2	-	-
4	Lacerta oarva Boulenger	Փոքրասիական մողես	1	1	-
5	Rhinolophus Mehelyi	Մեհելիի պայտաքիթ	1	1	-
6	Barbastella leucomelas Gretzschmer	Ասիական լայնականջ չղջիկ	2	-	-
7	Capra aegagrus erxleben	Բեզդարյան այծ	2	2	-
8	Mabuya aurata Linneaus	Ոսկեգույն մաբուա	1	1	-
9	Elaphe hohenakeri strauch	Անդրկովկասյան սահնաօձ	1	1	-
10	Telescopus fallax iberus eichwaldi	Կովկասյան կատվաօձ	1	1	-

4.2 Օդային ավազան

Արժանի համայնքի տարածքում մթնոլորտն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաների արժեքները, մգ/մ³ ներկայացված են ըստ բնակչության քանակի

Աղյուսակ 4.7-1

հհ	Աղտոտող նյութերի կոդերը և անվանումները	ՍԹԿ-ն բնակելի գոտում, մգ/մ ³	Ֆոնային կոնցենտրացիաների արժեքները, մգ/մ ³
1	002 – Փոշի	0.5	0.3
2	701 – Ծմբի երկօքսիդ	0.5	0.05
3	200 – Ազոտի երկօքսիդ	0.085	0.015
4	322 – Ածխածնի օքսիդ	5	0.8

Ինչպես երևում է 4.7-1 աղյուսակից Արժանի քաղաքի մթնոլորտային օդի աղտոտվածության մակարդակները գտնվում են բնակելի գոտու համար սահմանված նորմերում:

Սույն հայտում նախատեսված միջոցառումների արդյունքում՝ օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի սպասվում:

4.3 Ջրային ռեսուրսներ

Արովյան քաղաքի տարածքը գտնվում է Հրազդան գետի ջրհավաք ավազանում:

1. Օգտագործվել են Հրազդան գետի հիդրոերկրաբանական տվյալները

2. Հրազդան գետի ֆոնային աղտոտվածությունների մակարդակները, մգ/դմ³, որոնք տրամադրել է ՀՀ Բնապահպանության նախարարության բնական միջավայրի մոնիտորինգի կենտրոնը:

3. Հրազդան գետի ափերի անտառապատվածությունը, լանջի ցուցադրանքը: Տարածքի գնահատականը տրված է (2) հիման վրա:

Հաշվարկների արդյունքները բերված են 6-1 աղյուսակում:

Տարածքը մակերևութային ջրերի վիճակով բնութագրվում է որպես սահմանափակ բարենպաստ, ստորգետնյա ջրերի վիճակով՝ բարենպաստ:

4.4 Հողերի նկարագիրը

Հողերը

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- ❖ Բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
- ❖ Կիսաանապատային գորշ խճաքարային տեղ-տեղ կարբոնատային
- ❖ Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած:

4.5 Հողային ռեսուրսներ

Բնակելի համալիրի նախագիծը ենթադրում է հողային աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 15450 մ³ ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ և 4650 մ³ հետլիցք: Ավելցուկային 10800մ³ ծավալով հողային զանգվածը կտեղափոխվի Արովյանի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր: Հողային ռեսուրսների պահպանության նպատակով՝

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:
- Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավազ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փոված ավազը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով:

- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինարարական աղբից:

4.6 Թափոնների կառավարում

Արժույթի տարածքում աղբահանության նպատակով բնակելի թաղամասերում տեղադրված են աղբահավաք տարողություններ և աղբարկղներ: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր: Թաղամասերի առանձին տեղերում աղբը թափվում է չնախատեսված վայրերում, ինչը հանգեցնում է տարածքի սանիտարական վիճակի վատթարացմանը: Սակայն դրանց քանակը մեծ չէ և գնալով ավելի է նվազում:

Շինարարական աշխատանքների ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը՝ 700-800կգ, որը կտեղափոխվի մոտակա աղբավայր, և 90մ³ շինարարական աղբը: Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Բազմահարկ բնակելի համալիրի շահագործման ընթացքում կառաջանա կենցաղային աղբ, որը պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի համապատասխան ընկերության կողմից:

5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետ. նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները: Բոլոր տիպի թաքնված աշխատանքների համար պետք է կազմել թաքնված աշխատանքների ակտ տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից հաստատված:

Շին. հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից հաստատված դրույթներով, շին. հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

5.1 Ռիսկերի գնահատում

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,

- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

5.2 Արտանետումների աղբյուրները

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում
- դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

5.3 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն

5.3.1 Մթնոլորտային օդ

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- կառուցապատման ենթակա տարածքը ցանկապատել
- շինարարական աշխատանքների /փոշի առաջացման աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,
- իրականացնել շինհրապարակից դուրս եկող ավտոմեքենաների անվաղողերի լվացում
- պարբերապես ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգադրում:
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականացվի փակ ծածկով մեքենաներով.
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:

5.3.2 Ջրային ռեսուրսներ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,

- տարածքի հոսքերը կմիավորվեն մեկ բակային ցանցում և կմիացվեն սելավային ջրացանցին:
- անձրևվների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը գտնվում է շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե 25խմ ծավալով տարողություն, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 500քմ մակերեսով տարածքի վրա: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:
- Կանաչապատ տարածքների ոռոգումը կիրականացվի ավտոցիստեռներով, պայմանագրային հիմունքներով:

5.3.3 Հողային ռեսուրսներ

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Հողի բերրի շերտը պահպանելու նպատակով նախատեսվում է առաջնորդվել ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի թիվ 1396-Ն որոշմամբ հաստատված Հողի բերրի շերտի օգտագործման կարգով, մասնավորապես նախատեսել հետևյալ միջոցառումները.
 - գ. Հողի բերրի շերտը հանել և պահպանել ծածկված վիճակում՝ բացառելով շինարարական աշխատանքների հետևանքով դրա աղտոտումը:
- Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:
- Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավագ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փոխված ավազը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինաղբից:

5.3.4 Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները

- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:

- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հազեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկղիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործման, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:

- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:

- բոլոր աշխատողներին տրվելու են պաշտպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:

Ըստ նախնական գնահատման, ապահովվելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

5.3.5 Հակահրդեհային միջոցառումներ

ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,

բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,

գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:

5.3.6 Աղմուկ և թրթռում

Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակների չափազրույթներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը;
- Աղմկահարույց աշխատանքներն հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին:
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում:
- պարբերաբար ստուգել և կարգադրել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները, բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:
- Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:

5.3.7 Թափոնների կառավարում

Բնակելի համալիրի կառուցման ընթացքում թափոնների ճիշտ կառավարման համար կարևոր են հետևյալ միջոցառումների իրականացումը.

- Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:
- Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից
- Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել
- Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը;
- Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում;
- Վտանգավոր Արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը

Բնակելի համալիրի կառուցման ընթացքում աատաջացող շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

5.3.8 Տարածքի բարեկարգում կանաչապատում

Նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը բարեկարգել և կանաչապատել:

Կանաչապատ տարածքների ոռոգումն ջուր կմատակարարվի հատուկ ավտոմեքենաներով, պայմանագրային հիմունքներով կամ միանալով մոտակա ոռոգման ցանցին: Ծառատեսակների համար կնախատեսվի կաթիլային ոռոգման համակարգ:

Այն տեղամասերում, որոնք ենթակա են հնարավոր ազդեցության, տնկված ծառափուտային բուսականության բարձր աճը և կպչողականությունն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել մոնիթորինգ:

Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառված են շինարարության նախահաշվի մեջ և կիրականացվեն շինարարական կազմակերպության կողմից:

6. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ

Բազմաբնակարան բնակելի բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ:
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասնահանել 350 հազ. դրամ, ամբողջ շինարարության ընթացքում 700 հազ. դրամ:

Շինարարական աշխատանքների ընթացքում կիրականացվեն մշտադիտարկումներ ուղղված շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանման:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
Ընդհանուր դրույթներ	Նախագգուշացումներ և աշխատողների անվտանգություն	(a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախագգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ (b) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել (c) Կապալառուն պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա: (d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ) (e) Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:
Շինարարական աշխատանքներ	Օդի որակ	(a) Շինաշխատանքների իրականացման ընթացքում հատուկ տարողություններ կկիրառվեն շինարարական աղբի հեռացման համար՝ Նշված տարողությունները պետք է պահպանվեն տարածքում և անընդհատ ցողվեն ջրով՝ թափոններից գոյացած փոշու քանակը նվազեցնելու նպատակով (b) Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով (c) Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինհրապարակում չի թույլատրվի:
	Աղմուկ	(a) Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում (b) Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերը պետք է ծածկվեն:
	Թափոնների կառավարում	(a) Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար: (b) Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր: (c) Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից (d) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն (e) Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները բազմանվազ օգտագործել
Կեղտաջրերի հեռացում	Ջրի որակ	(a) Շինարարական անձնակազմը կօգտվի գոյություն ունեցող կենցաղային միջոցներից, կոյուղաջրերի հեռացումը շինհրապարակից պետք է իրականացվի ընդհանուր կոյուղու համակարգի միջոցով,

<p>Թափոնների կառավարում</p> <p>▪</p>	<p>Շին աղբի տեղադրում անհամապատասխան վայրերում;</p> <p>Վառելիքի, յուղի կամ այլ թունավոր նյութերի արտահոսքի պատճառով</p> <p>հնարավոր է վտանգավոր նյութերի թափանցում հողի մեջ</p>	<ul style="list-style-type: none"> - Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար: - շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր: - Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից - Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն - Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել - Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը <p>Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում;</p> <ul style="list-style-type: none"> - Արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար;
--------------------------------------	---	--

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	Կատարող
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարի ան պայմանագրերը կնքելու ընթացքում	Կապալառու
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	<ul style="list-style-type: none"> - Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում - Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում - հերթականության ապահովմամբ - Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում 	<ul style="list-style-type: none"> - Շինհրապարակ - Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ 	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	<ul style="list-style-type: none"> - Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում - Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում 	Շինհրապարակ	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Կապալառու
Հողային աշխատանքներ	- Հանված հողերը հեռացվում են համայնքի կողմից հատկացված վայր	Շինհրապարակ	Գործընթացների ստուգում	Հողային աշխատանքների ընթացքում	Կապալառու

Բներտ շինանյութերի գնում	- Շինանյութերի գնում վստահելի մատակարարներից	Բներտ նյութերի պահեստ	Փաստաթղթերի ստուգում Գործընթացների ստուգում	Մատակարարման ընթացքում	Կապալառու, մատակարար
Կենցաղային աղբի առաջացում	- Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում - համայնքի թույլտվություն աղբի մշտական տեղակայման վերաբերյալ	Շինհրապարակ	Արտաքին գնում	Շինարարության ողջ ընթացքում	Կապալառու, քաղաքապետարանի վերահսկողություն
Աշխատանքի անվտանգություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Կապալառու, պատվիրատու
Տարածքի Կանաչապատում, բարեկարգում Վտանգավոր նյութերի և թափոնների կառավարում	Տեղանքին բնորոշ ծառաթփային բուսականության Թփերի և այլ բուսականության նորմալ աճ վառելիքի, յուղերի և այլ թունավոր նյութերի պատահական կամ մշտապես տեղի ունեցող արտահոսքեր	Կառուցապատվող հողամաս Շինհրապարակ	Կանաչապատման բոլոր տեղամասերը Արտաքին գնում Արտաքին գնում	Շինարարության Ավարտին Շինարարության ընթացքում	Կապալառու, Կապալառու,

ՕԳՏԱԳՈՂԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մթնոլորտային արևանէտումների գույքագրման ձեռնարկ, ЕМЕП/ЕЕА, 2009:
2. СН 245-71. Санитарные нормы проектирования промышленных предприятий.
3. СНиП 1.02.01-85 Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
4. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
5. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
6. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохраных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.
7. Укрупненные нормы водопотребления и водоотведения для различных отраслей промышленности, Стройиздат, Москва, 1982г.
8. Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР, Москва 1984г.
9. Нормы расхода топлив и смазочных материалов на автомобильном транспорте.
10. Нормы расхода жидкого топлива для машин, эксплуатирующихся в предприятиях уборки городских территорий, санитарной очистки и ремонтно-строительном производстве.
11. "Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին" ՀՀ օրենքը, ընդունված 2006 թվականի դեկտեմբերի 20-ին:
12. ՀՀ Կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի "նակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին" թիվ 160-Ն որոշում:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 մարտի 2019 թվականի N 178

**«ՍԻՓԱՆ ՀՅՈՒՐԱՆՈՑ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ
ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅՆՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով «Սիփան հյուրանոց» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի հայտը (մուտք՝ 2019 թվականի փետրվարի 26-ի N Ք-274)։

1. «Սիփան հյուրանոց» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տա քաղաքնակարան բնակելի շենքերի և առևտրի կենտրոնի կառուցման նախագծման թույլտվություն (նախագծման թույլտվությունը կցվում է)։

2. «Սիփան հյուրանոց» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանա շինարարության թույլտվություն։

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Սիփան հյուրանոց» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվա հաջորդող օրվանից։

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2019թ. մարտի 13
ք. Արվյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ, ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ
ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

N 19 «13» մարտի 2019 թ.

Օբյեկտ բազմաբնակարան բնակելի շենքերի և առևտրի կենտրոնի կառուցման
(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն)
աշխատանքային նախագծային փաստաթղթերի մշակման համար:
(հակիրճ բնորոշումը, հզորությունը, ռիսկայնության
աստիճանը (կատեգորիան), նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը ք. Արովյան, Բարեկամության հրապարակ, թիվ 3/1 շինություն, ծածկագիր՝ 07-002-0047-0010

(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)
Կառուցապատող «ՍԻՓԱՆ ՀՅՈՒՐԱՆՈՑ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, ՀՀ, ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ, ք. Արովյան, Բարեկամության հրապարակ թիվ 3
(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը,
բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմք կառ. հայր. սեփ. Վկայական N 02092013-07-0080 փրված 02.09.2013թ.

(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման,
անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերը)
Առաջադրանքի գործողության ժամկետը 1 փարի
(N 1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող սկզբնական նախագիծով
Մ 1:500)

1. Հողամասը գտնվում է բնակավայրեր բնակելի կառուցապատման
(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, հողամասի նշանակությունը,
գործառնական նշանակությունը)

2. (*) Հողամասի չափերը 0.767136 հա
(հողամասի սահմանները՝ կոորդինատային նշահարմամբ, մակերեսը (հա))

3. Հողամասի առկա վիճակը գոյություն ունեն շինություններ
(ոեյինֆի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդման ենթակա) առկայությունը
(օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և
այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն)



4. (*) Տրանսպորտային պայմանները

ներդրարային նշանակության ճանապարհ
(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն)

5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ (ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր)

կից փարածքներով անցնող ինժ. գծեր և հաղորդակցուղիներ

(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)

6. (*) Կից հողամասեր

(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)


7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ)

(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)

8. (*) Հատակագծային սահմանափակումներ

հաշվի առնել կից փարածքներում առկա և նախադեսվող կառուցապատումը

(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)



ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

(ասֆալտանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը փորձադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

9. Ճարտարապետա-հատակագծային պահանջներ

մշակել նախագիծ՝ անշարժ գույքի սեփ. վկայականով փրված հողամասի ահմաններում

(եկելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմավորված (կազմավորվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից, առաջարկություններ ճակատների ձևավորման, տանիքների, արտաքին դռների, պատուհանների

12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրի մատակարարում

կցվում է

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.2. (*) էլեկտրամատակարարում

կցվում է

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.3. (*) գազամատակարարում

կցվում է

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը

կցվում է

(համաձայն N 1 հավելվածի 58-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ելակետային տվյալների)

12.5. թույլ հոսանքներ

12.6. աղբահանություն

13. Տարածքի ինժեներական նախապատրաստում

կազմակերպել ջրահեռացում

(ռեյինֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)

14. Բարեկարգում

ազատ փարածրը բարեկարգել և կանաչապատել

(լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, գովազդ և այլն)


15. Շինարարական նյութեր

ե/ք փարրեր, քարե շար

(շինարարական նյութերի օգտագործման առաջարկությունները տանիքների, ճակատների լուծումների, արտաքին դռների, պատուհանների վերաբերյալ)

16. Պաշտպանական կառույցներ

(արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումները)



17. Հակահրդեհային պահանջներ

ապահովել հակահրդեհային նորմատիվ պահանջները

(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)

18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ

ապահովել հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանությունը

19. Շրջակա միջավայրի պահպանում

ապահովել շրջակա միջավայրի պահպանման համապատասխան միջոցառումները

(շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները)

20. Շինարարության կազմակերպում

(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը

1 փարի, ճարտարապետական մաս և կոնստրուկտիվ մաս

(նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ

ենթակա է պարզ փորձաքննության

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտին)

23. Միջանկյալ համաձայնեցում

(իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ էսքիզային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ N 1 հավելվածի 87-րդ կետով նախատեսված դեպքում)

24. Հասարակական քննարկումներ

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)

25. Համաձայնեցումների կամ մասնագիտական եզրակացությունների ստացում

(Նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման՝ օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)

26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում

27. Այլ պայմաններ

նախագիծը ներկայացնել համաձայնեցման 2 օրինակից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԱՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԴԵԿԱՎԱՐ



[Handwritten signature in blue ink]

ՎԱՀԱԳՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԲԸ
«Գ Ե Ղ Ա Մ Ա» մասնաճյուղ
«ԱՐՈՎՅԱՆ» ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑ

ЗАО "ЭЛЕКТРИЧЕСКИЕ СЕТИ АРМЕНИИ"
филиал "ГЕГАМА"
ЭЛЕКТРОСЕТЬ „АБОВЯН“

“ELECTRIC NETWORKS OF ARMENIA” CJSC
“GEGAMA” Branch
ELECTRIC NETWORKS OF “ABOVIAN”

Հ, 378510, ք. Արովյան, Արզնու խճուղի, հեռ. (022) 2-23-71, 010-28-44-77, ֆաքս 2-08-25
A, 378510, г. Абовян, Арзнийское шоссе, тел. (022) 2-23-71, 010-28-44-77 факс 2-08-25
highway Arzni, 378510, Abovian Rep.of Armenia, tel: (022) 2-23-71, 010-28-44-77 fax 2-08-25

N 867

« 19 » ----- 12 ----- 2019թ.

ՀՀ

Համայնք Արովյան
Բարեկամության հրապարակ թիվ 3/1
„Սիփան հյուրանոց,, ՄՊԸ-ն
Տնօրեն պարոն ԱՍ Ղամբարյանին

Հարգելի պարոն Ղամբարյան.

Ձեր ընկերությանը պատկանող տարածքում կառուցապատման աշխատանքները
իրականացնելու նպատակով տարածքի 0,4 կՎ էլեկտրամատակարարումը
իրականացվի Արովյանի թիվ 3638; 250 կՎԱ ՏԵ-ի 0,4 կՎ բաշխիչ վահանից
առուցելով 0,4 կՎ օդային մալուխագիծ:

„Արովյան,, էլ. ցանցի պետ՝

Կ. Թաղևոսյան

տարող՝ Ս. Խանձրաձյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Կադաստրի
կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է ի թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ՍԻՓԱՆ ՀՅՈՒՐԱՆՈՅ» ՍՊԸ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Կոտայք, համայնք Աբովյան ք. Բարեկամության հրապարակ 3/1

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Անշարժ գույքի փոխանակության պայմանագիր 22/10/2019թ. գ/մ 8350, Համայնքի ղեկավարի 28.11.2019թ. թիվ 1249 որոշում, Որակավորման վկայական ունեցող անձի կողմից կազմված հողամասի բաժանման հատակագիծ, Անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայական թիվ 2807911, Վկայական N 02092013-07-0080, Սեփականության վկայական 25102019-07-0115, N 16052019-07-0109, Համայնքի ղեկավարի 29.04.2020թ. թիվ 302 որոշում, Հողամասի կադաստրային արժեքի վճարման անդորրագիր՝ N000170

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 07-002-0047-0015

Մակերեսի չափը (հա)՝ 0.767136

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Բնակելի կառուցապատման, Հասարակական կառուցապատման

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 07052020-07-0091, գաղտնաբառ՝ KLUGM4VBYYXB

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝ բնակելի
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ Կադաստրային

ծածկագիր Տեսակ Մակերես Գրանցված իրավունքի տեսակ

1 07-002-0047-0015-001 Պահակատուն 18 քմ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

2 07-002-0047-0015-002 Ջրավազան 75.8 քմ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Առկա է 7.45քմ մակերեսով ինքնակամ կառույցներ: 0.767136հա հողամասից 0,0750հա՝

Հասարակական կառուցապատման, 0,692136 հա՝ Բնակելի կառուցապատման: 0,0750

հա հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցված է 04/10/2005թ.

N199-Ն ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի պահանջների համաձայն, պայմանով՝ գույքի հետագա

օտարման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումը կկատարվի

վճարման պահին

գործող հողամասի կադաստրային արժեքի վճարման անդորրագիրը ներկայացվելու

դեպքում:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Անի Աբգարյան

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման

անշարժ գույքի ավագ ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 07052020-07-0091, գաղտնաբառ՝ KLUGM4VBYYXB

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի

www.e-cadastre.am կայքէջի միջոցով



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ**

«ՀՀ Կոտայքի մարզ, ք. Արովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. huug@abovyan.kotayq@mta.gov.am»

16 հոկտեմբերի 2020թ. N Ե-1941

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Սույն թվականի սեպտեմբերի 30-ին՝ ժամը 11:00-ին ՀՀ Կոտայքի մարզ, ք. Արովյան, Բարեկամության հրպ. 1 շենք հասցեում՝ Արովյան քաղաքի ղեկավարի նստավայրում, տեղի ունեցան Արովյան քաղաքի Բարեկամության հրապարակի 3/1 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքերի կառուցման աշխատանքային նախագծի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումներ: Համայնքի կարծիքը նախատեսվող գործունեության վերաբերյալ դրական է, դիտողություններ և առաջարկություններ չկան:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ



ՎԱՀԱԳՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

*Կապ. Քաղաքաշինության բաժնի 1-ին կարգի մասնագետ
Արթուր Խայկապետյան*